«ՇԱՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

«ՇԱՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Շանթ» հեռուստաընկերություն, հեռուստաընկերություն, «Շանթ», «մենք», «մեզ», «մեր») էթիկայի կանոնագիրը հեռուստաթերթերի կազմակերպման, հեռուստատեսային հրապարակումների իրականացման կանոնների և Շանթի աշխատակիցների վարքագծի պարտադիր նորմերի ամբողջություն է, որը նպատակ է հետապնդում «Շանթ» հեռուստաընկերության կողմից հեռարձակվող կոնտետնը համապատասխանեցնել ժամանակակից լավագույն չափանիշներին, մեր հեռուստադիտողին աջակցել ըստ նախասիրության դիտման ընտրություն կատարելու հարցում, միտված է շարունակական զարգացման՝ հեռուստադիտողների փոփոխվող կարիքներն ու հեռուստատեսային ճաշակն ապահովելու համար:

«Շանթ» հեռուստաընկերության ողջ գործունեության, ինչպես նաև էթիկայի կանոնագրի հիմքում դրված է հեռուստատեսությունը որպես բիզնես գործելու նախընտրությունը: Սա ենթադրում է զերծ պահել ընկերությունը բոլոր քաղաքական ազդեցություններից և առանջնորդվել միայն արժանապատիվ բիզնեսի և ՀԼՄ էթիկական նորմերով և չափանիշներով:

Շանթի ֆինանսական աղբյուրները գոյանում են միմիայն հաջող և արդար բիզնեսի արդյունքում, Շանթը չի ծառայում որևէ քաղաքական կուրսի, քաղաքական պատվերներ չի կատարում, չի ենթարկվում որևէ հովանավորի ազդեցության:

Մենք, նախևառաջ, մտածում ենք մեր լսարանի մասին:

Շանթի հաջողության գրավականը և գլխավոր անկյունաքարը մշտապես նորարարական գաղափարներն ու մոտեցումներն են. մենք չենք վախենում փորձեր կատարելուց, նոր հեռուստածրագրեր ստեղծելուց և այդ ինքնատիպության շնորհիվ է Շանթը ստեղծման օրվանից գրավիչ դարձել հեռուստադիտողի, արժանի մրցակից մյուս հեռուստաընկերությունների համար:

Շանթն ապահովում և հավատարիմ է մնում, որ խելամիտ գործարար պրակտիկան գերակշռի մեր բոլոր գործողություններում և առօրյա բիզնեսում: Ահա թե ինչու Շանթը բարձր պատասխանատվությամբ է մոտենում է առկա մարտահարավերներին՝ առաջնորդվելով ճկունության, ծախսերի հաշվառման, որակի ապահովման և թափանցիկ գործելաոճով:

Որպես խիստ մրցակցային բիզնեսի մասնակից Շանթը, ելնելով սեփական բիզնես շահերից և պահպանելով բիզնեսի էթիկական ստանդարտները, ձգտում է միաժամանակ բավարարել իր հեռուստադիտող հանդիսացող հասարակության լայն շերտերի բիզնես, քաղաքական, տեղեկատվական, ժամանցային, մշակութային և կրթական պահանջմունքները և հեռուսատեսային ճաշակի բազմազանությունը:

Մեր հեռուստադիտողն իրավունք ունի որակյալ ստեղծագործական նյութեր, անաչառ և արդար տեղեկություններ և հետաքրքիր գաղափարներ ստանալ:

Շանթի հեռուստադիտողն ակնկալում է, որ մենք հավասարակշռում ենք խոսքի ազատության իրավունքը և օրենսդրական պարտականությունները:

Մենք անկողմնակալ ենք, ձգտում ենք արտացոլել մեր լսարանի տեսակետներն ու փորձը, որպեսզի մեր հեռուստատեսային արտադրանքն ընդհանուր առմամբ ներառի լայն և բազմակողմանի կարծիք, և որևէ կարևոր իրադարձություն կամ գաղափար անտեսված չմնա:

«Շանթ» հեռուստաընկերության էթիկական կանոնագրքի հիմքում, ընդունված համընդհանուր նորմերի կողքին, դրված են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1. Լրատվական գործունեության մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն՝
   - Անկողմնակալ ու հավասարակշռված մոտեցումը,
   - Հավաստի և ճշտված տեղեկությունների տարածումը,
   - Հեռուստադիտողի հանդեպ անկեղծ և ազնիվ պահվածքը.
2. Ժամանցային և բեմադրված ծրագրերի արտադրության համար առաջնակարգ նորմերն ու սկզբունքներն են՝
   - Արդարացիությունը,
   - Հավասարությունը,
   - Անկեղծությունը,
   - Ճշմարտացիությունը.
3. Բիզնես գործընկերների հետ հարաբերություններում առաջնային նորմերն են՝
   - Փոխշահավետությունը,
   - Ազնվությունը,
   - Փոխադարձ վստահությունը,
   - Ճշտապահությունը,
   - Պատասխանատվությունը.
4. Աշխատակիցների հետ հարաբերությունները կառուցվում են մեկ ընդհանուր ընտանիքի տրամաբանությամբ՝
   - Փոխադարձ վստահություն,
   - Փոխադարձ հարգանք,
   - Շահերի ընդհանրություն:

Որպես հեռարձակող, գերխնդիր և առանցքային ուղենիշ ընտրելով հասարակության վստահությանն արժանի լինելը և մշտապես ձգտելով վաստակել հանրային հարգանք՝ Շանթը որդեգրել է հետևյալ քաղաքականությունը՝

Հարգանք հեռուստադիտողների նկատմամբ, որը ենթադրում է.

1. Անկեղծ և ազնիվ պահվածք դրսևորել հեռուստադիտողի հանդեպ, չմոլորեցնել կամ չխաբել նրանց:
2. Զերծ մնալ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը վտանգող, անձնական տվյալներ բացահայտող, անձի նկարը կամ անձին նույնականացնելու հնարավորություն ընձեռող վերջինիս զբաղմունքի, կոչման, տարիքի, ազգության, սեռի և այլնի մասին ցանկացած մանրամասների հրապարակումներից, եթե դա ակնհայտորեն արդարացված չէ հանրային շահի պաշտպանության տեսակետից:
3. Հեռուստաեթերի ընթացքում ցուցաբերել հնարավոր ամենախիստ ուշադրությունը հանցագործություններից և դժբախտ պատահարներից տուժածների նկատմամբ, զգուշություն ցուցաբերել ինքնասպանության և ինքնասպանության փորձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման մեջ: Անձնական տվյալներ և նկարներ հրապարակելիս պարտադիր կերպով քննարկել դրանց նպատակահարմարության հարցը՝ տուժածների և վերջիններիս հարազատների զգացմունքների նկատմամբ հարգանք ցուցաբերելու համար:
4. Զերծ մնալ էթնիկ ծագման, սեռի, զբաղմունքի, քաղաքական պատկանելության, կրոնական համոզմունքների, ընտանեկան կամ ֆինանսական դրության, ֆիզիկական կամ մտավոր ունակությունների հիմքով խտրական մոտեցման դրսևորումներից:
5. Խստիվ կերպով պահպանել այն նորմը, որ իրավախախտման մեջ կասկածվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ մեղքը օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել:
6. Հեռուստաեթերում չներառել հետուստադիտողների զգալի մասի համար լուրջ անհանգստության պատճառ հանդիսացող կամ վիրավորական նյութեր, եթե դա հիմավորված չէ հանրային շահի տեսակետից:
7. Մշտապես ողջունել հեռուստադիտողների արձագանքը և տեսակետը:

Մասնագիտական վարքագծի կանոններ և անձնակազմի փոխհարաբերություններ

Հեռուստաընկերության և վերջինիս աշխատակիցների հանդեպ հեռուստադիտողների վստահությունը պահպանելու գործում Շանթը կարևորում է.

1. Անձնակազմի կողմից մասնագիտական վարքագծի կանոններին հետևելը,
2. Հեռուստատեսության ոլորտում աշխատանքի գրավիչ դարձնելը՝ թույլ տալով իր աշխատակիցներին անձնական և մասնագիտական նվաճումների միջոցով նպաստել հեռուստաընկերության հեղինակության և որակի բարձրացմանը:
3. Յուրաքանչյուր աշխատակցի, ի լրումն օրենսդրությամբ նախատեսված երաշխիքների, արդար վարձատրության և վերաբերմունքի, վերջիններիս անձնային հատկանիշներն ու մասնագիտական որակն առավելագույն հարգանքի և գնահատման արժանացնելը:

Շանթի յուրաքանչյուր աշխատակցից պահանջվում է՝

1. Հավատարիմ մնալ ազնվության, արդարության, անկախության, արժանահավատության և լրատվության բազմազանության և հավասարակշռվածության սկզբունքներին:
2. Մասնագիտական մղումները վեր դասել առևտրային կամ քաղաքական նկատառումներից:
3. Զերծ մնալ արտաքին այն ճնշումներին ենթարկվելուց, որոնք նպատակ ունեն խոչընդոտել կամ սահմանափակել օրինական և արդարացի հրապարակումներ կատարելուն:
4. Զեռնպահ մնալ որևէ արտաքին ուժերի կողմից «պատվերով» հրապարակում կատարելուց կամ հաղորդումներ ստեղծելուց:
5. Ցանկացած հեռուստատեսային հրապարակում կամ հաղորդում եթեր հեռարձակել բացառապես մասնագիտական մղումներից և հեռուստադիտողների պահանջմունքներից ելնելով:
6. Կտրականապես հրաժարվել ցանկացած բնույթի կոմիսիաներից, հրավերներից, նվերներից կամ այլ արտոնություններից, և աշխատակցի ազատությունն ու անկախությունը կասկածի տակ դնող որևէ համաձայնագրի կնքումից կամ այլ պարտավորություններ ստանձնելուց:
7. Զերծ մնալ հեռուստաընկերության աշխատակցի դիրքը անձնական շահին ծառայեցնելու, մասնավոր արտոնություններ ստանալու կամ ցանկացած տիպի ճնշումներ գործադրելու նպատակով օգտագործելուց:
8. Ամեն կերպ ձգտել բացահայտել ճշմարտությանը. այն մեր հաղորդումներում և հրապարակումներում ներկայացնել այնպես, որ հեռուստադիտողի մոտ կասկած չմնա դրա վավերության և հավաստիության մասին:
9. Պատշաճ ուշադրությամբ անդրադառնալ յուրաքանչյուր խնդրի կամ իրադարձության՝ հստակ, փաստացի և ճշգրիտ պատկեր ներկայացնելու համար:

Պատշաճ մրցակցություն և անկողմնակալություն

Շանթը ընդունում և ողջունում է արդար և ազնիվ մրցակցությունը՝ գիտակցելով, որ պատշաճ մրցակցությունը հանդիսանում է հեռուստաընկերությունների գործունեության ստանդարտների, արտադրանքի որակի կատարելագործման հիմք: Արժանի մրցակից հանդիսանալու ճանապարհին Շանթը միևնույն ժամանակ հավատարիմ է մնում հետևյալ սկզբունքներին՝

1. Տարաբնույթ տեսակետները և կարծիքները ներկայացնել առանց կողմնակալության և առանց աղավաղման:
2. Առաջնորդվել օբյեկտիվությամբ՝ «սենսացիա» ստանալը չդարձնելով գերնպատակ:
3. Հանդիսանալ հասարակության տարբեր շերտերի արժեքային համակարգը՝ իրենց մշակութային առանձնահատկություններով և համոզմունքներով, հաշվի նստել դրա հետ՝ վերջինիս անկողմնակալ արտացոլումն ապահովելու համար:

4. Պահպանել տեղեկատվության աղբյուրների հետ աշխատելու թափանցիկությունը՝ միևնույն ժամանակ պահպանելով այդ աղբյուրների հեղինակային իրավունքներին վերաբերող նորմերը:
5. Հստակ տարբերակել տեղեկատվական նյութում ներկայացված իրական փաստերը կարծիքներից և վերլուծություններից՝ անհարկի շահարկումներից խուսափելու համար:

Հեռուստածրագրերի էթիկական կանոններ

Տեղեկատվական (Լրատվական) և վերլուծական ծրագրեր

Լրատվական գործունեության մեջ, առանձնահատուկ կարևորություն ունեն՝

1. Ճշգրիտ, հավաստի և օբյեկտիվ լրատվության հաղորդումը,
2. Լրատվության աղբյուրների նկատմամբ քննողական վերաբերմունքի ցուցաբերումը,
3. Իրական հանգամանքների լույսի ներքո հնարավորինս ուշադիր բոլոր փաստերի ստուգումը՝ հեռուստադիտողին հնարավորություն ընձեռելով փաստերը տարբերակել հայտարարություններից և մեկնաբանություններից՝ վերջինիս թողնելով եզրակացությունների կազմումը,
4. Վիճահարույց հանրային խնդրի որևէ կողմին սատարելու, աջակցելու կամ հակառակը՝ խոչընդոտելու նպատակի չհետապնդումը,
5. Տեղեկատվական նյութի խմբագրի կամ թիմի որևէ անդամի կարծիքի կամ ցանկության հիման վրա աղավաղված տեղեկատվության տրամադրման բացառումը.
   Սույն կանոնից չի բխում, որ Շանթը բացառում է լրատվական նյութերի վերլուծումն ու պարզաբանումը. նմանատիպ վերլուծությունը կամ մեկնաբանությունը հստակ նշվում են որպես այդպիսին և չեն համարվում լրատվության ներկայացում: Խմբագրական կարծիքը նույնպես նշվում է որպես այդպիսին և տարբերվում է լուրերի կանոնավոր հեռարձակումներից:
6. Նկարների, գրաֆիկական պատկերների, վիդեոնկարահանումների և բոլոր տեսակի նյութերի իսկության ստուգումը և ոչ մի կերպ դրանց ապակողմնորոշիչ նպատակներով չկիրառումը:
7. Ցանկացած սխալ կամ ոչ հավաստի տեղեկատվություն շտկումը և հերքումը կամ այդպիսի տեղեկատվություն տրամադրած անձանց համապատասխան հնարավորության տրամադրումը: Ուղղումները և հերքումները հրապարակվում են անհապաղ, այնպես, որ դրանք հասանելի լինեն նախնական տեղեկատվությունը ստացողների համար:
8. Հեռուստահողորդումների ընթացքում քննադատության արժանացած անձանց քննադատությանը պատասխանելու հնարավորության ընձեռումը:
9. Հասարակության հիմնախնդիրների բոլոր ասպեկտները ներկայացնելու անհրաժեշտությունց ելնելով հեռուստահաղորդումների ժամանակի այնպիսի բաշխումը, որ համակողմանիորեն հնարավոր լինի անդրադառնալ բոլոր կողմերին՝ ներկայացված հարցերի նկատմամբ հանրության հետաքրքրության աստիճանին համապատասխան:

10. Հանրային հետաքրքրության ներկայացնող ցանկացած հակասական երևույթի, բնագավառի վերաբերյալ կարծիքների բազմազանության, անկողմնակալ մոտեցման ապահովումը:

Մանկական ծրագրեր

Երեխաների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման և զարգացման նպատակով Շանթը ստանձնել է պատասխանատվություն՝ ապահովել հնարավորինս խիստ և ուշադիր վերահսկողություն մանկական ծրագրերի բովանդակության ընտրության և ստեղծման գործում:

Շանթի մանկական հեռուստահաղորդումներում կարմիր թելի պես անցնում է արդարության գաղափարը:

Մեր մանկական ծրագրերը ներկայացվում են պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակով, դրանք արտացոլում են հայ հասարակության բարոյական և էթիկական չափանիշները և նպատակ ունեն նպաստել երեխայի կայուն հոգեկերտվածքի ձևավորմանը:

Մենք ձգտում ենք հեռարձակել երեխաների պատկերացումներին և արկածախնդրությանը համապատասխանող ծրագրեր:

Ժամանցային և բեմադրված ծրագրեր

Շանթն իր ժամանցային, հումորային և երգիծական ծրագրերում ողջունում է խոսքի ազատությունը՝ հնարավորություն ստեղծելով հումորի միջոցով մեկնաբանել շրջապատող աշխարհը: Այնուամենայնիվ, մենք գիտակցում ենք, որ խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և այն ենթակա է ողջամիտ զսպվածության և սահմանափակվում է հասարակության հանդեպ հարգանքով, անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությամբ և հանրային շահի գերակայությամբ:

Շանթի կողմից հեռարձակվող սերիալներում շեշտադրվում են հասարակությանն ամենահուզող սոցիալական խնդիրները և ամենաարդիական թեմաները, դրանց մեջ շոշափվում են հայրենասիրությունը, պետականամետ և ազգանվեր մտածելակերպը խրախուսող գաղափարներ:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ՇԱՆԹ» ՍՊԸ նախագահ՝ **Արթուր Եզեկյան**

Կ.Տ.

«ՇԱՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԵԽԱՆԻԶՄԸ (ՄՈԴԵԼԸ) ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

Սույն փաստաթղթով սահմանվում է «ՇԱՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն, Հեռուստաընկերություն, Շանթ) Էթիկայի կանոնագրի (այսուհետ նաև՝ Կանոնագիր) նորմերի պահպանման, խախտումների կանխարգելման մեխանիզմը և Կանոնագրի դրույթների կիրառումն ապահովող անձի (Օմբուդսմանի) գործառույթները, նշանակման կարգը, լիազորություններն ու վերջինիս կողմից որոշումների ընդունման կարգը:

Էթիկայի կանոնագրի դրույթների կիրառումն ապահովելու նպատակով Շանթը սահմանել է ինքնակարգավորման համակցված (հիբրիդային) մեխանիզմ՝ միանձնյա պաշտոնատար անձի՝ Օմբուդսմանի աշխատանքն ըստ անհրաժեշտության համատեղելով խորհրդակցական կոլեգիալ մարմնի՝ Էթիկայի խորհրդի աշխատանքի հետ:

1. Օմբուդսմանի գլխավոր գործառույթը Շանթի անձնակազմի կողմից Ընկերության Էթիկայի կանոնագրով սահմանված դրույթների պահպանման նկատմամբ մշտական հսկողության իրականացումն է:
2. Օմբուդսմանը հեռուստաընկերությունում մշտապես գործող անձ է, որը նշանակվում է աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ երեք տարի ժամկետով (պարտադիր կերպով եռամյա փորձաշրջանը հաջողությամբ անցնելուց հետո):
3. Օմբուդսման չի կարող նշանակվել Ընկերության հետ այլ աշխատանքային հարաբերություններում գտնվող անձը:
4. Օմբուդսման նշանակվող անձի ընտրության համար պարտադիր պայման է բարձրագույն կրթությունը մեդիա իրավաբանության բնագավառում և առնվազն 9 տարվա աշխատանքային փորձը մեդիա իրավաբանության բնագավառում:
5. Նույն անձը երկրորդ անգամ անընդմեջ Օմբուդսմանի պաշտոնում կարող է նշանակվել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Օմբուդսմանը պարտավոր է.

- Ընկերության էթիկայի կանոնագրի դրույթներին ծանոթացնել Ընկերության բոլոր աշխատակիցներին,
- Կանոնագրի վերաբերյալ անձնակազմի շրջանում տանել իրազեկման և բացատրական աշխատանքներ, անցկացնել սեմինարներ,
- Էթիկայի կանոնագրի կատարելագործման ուղղությամբ համապատասխան առաջարկություններով հանդես գալ Ընկերության ղեկավար կազմի առջև,
- մշտապես հսկողություն իրականացնել հեռարձակվող հաղորդումների մեջ Ընկերության կողմից որդեգրած և էթիկայի կանոնագրում ամրագրված բոլոր նորմերի խստիվ պահպանման նկատմամբ,

- ծանոթանալ իրեն հասցեագրված փաստաթղթերին, տալ համապատասխան լուծումներ,
- կատարել ընկերության նախագահի և մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումները,
- չհրապարակել իր լիազորությունների իրականցման բերումով իրեն հայտնի դարձած Ընկերության՝ աշխատանքային և ներկազմակերպական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները.
- իրականացնել իրեն ուղղված դիմումների նախնական ուսումնասիրություն,
- բարեխղճորեն, պատշաճ որակով և ժամանակին կատարել Ընկերության հետ կնքած աշխատանքային պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները,
- ամբողջ աշխատաժամանակն օգտագործել իր աշխատանքային պարտականությունների կատարման համար, ինչպես նաև ներդնել իր բոլոր կարողությունները, գիտելիքները և ունակությունները Էթիկական կանոնագրի դրույթների անշեղ կատարումն ապահովելու գործում :

Ընկերության անդամների կողմից Էթիկայի կանոնագրի դրույթների խախտման դեպքում Օմբուդսմանը վարույթ է հարուցում՝

ա) գրավոր դիմումի հիման վրա,

ա) սեփական նախաձեռնությամբ:

Էթիկայի կանոնագրի դրույթների խախտման կամ ոչ պատշաճ կիրառման ցանկացած դեպքի վերաբերյալ Օմբուդսմանը անմիջապես տեղեկացնում է Ընկերության Նախագահին և Էթիկայի խորհրդին:

Էթիկայի խորդուրդը Օմբուդսմանին կից խորհրդակցական մարմին է, որը ստեղծվում է Ընկերության առավել փորձառու աշխատակիցներից՝ Կանոնագրի դրույթների խախտման դեպքերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրելու և խախտումների ու դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումների կայացման նպատակով :

Էթիկայի խորհուրդը կազմվում է Ընկերության 6 անդամներից՝

- Ընկերության նախագահ
- Լրատվական բաժնի ղեկավար
- 2 հաղորդավար-խմբագիր
- 2 լրագրող-մեկնաբան

Այն դեպքերում, երբ ենթադրյալ խախտման բնյութից ելնելով միայն Օմբուդսմանի գնահատականը բավարար չէ լինում և պահանջվում է բազմակողմանի մասնագիտական գնահատական, խախտման դեպքի առթիվ Օմբուդսմանը 2-օրյա ժամկետում հրավիրում է նիստ՝ Էթիկայի խորհրդի, խախտում թույլ տված Ընկերության համապատասխան աշխատակցի/աշխատակիցների, ինչպես նաև դիմումատուի մասնակցությամբ: Նիստին հրավիրվում են նաև Ընկերության շահագրգիռ անձինք: Վարույթն իրականացվում է հնարավորինս սեղմ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում: Նիստի արդյունքում Օմբուդսմանը կազմում է արձանագրություն:

Օմբուդսմանն իրավասու է դիմողից պահանջել 5-օրյա ժամկետում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ Ընկերության համապատասխան աշխատակցից (ում կողմից թույլ է տրվել ենթադրյալ խախտումը)՝ գրավոր պարզաբանում՝ դրան կցելով իր փաստարկների

հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Օմբուդսմանը պարտավոր է ապահովել աշխատակցի լսված լինելու իրավունքը՝ վերջինից ընդունել բացատրություն:

Հարցի քննության արդյունքում Օմբուդսմանի առաջարկությամբ և Էթիկայի խորհրդի մասնագիտական եզրակացությամբ Ընկերության Նախագահի կողմից կայացվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

ա) Ընկերության աշխատակցի կողմից Էթիկայի կանոնագրի դրույթները խախտելու փաստը հաստատելու մասին,

բ) Ընկերության աշխատակցի կողմից Էթիկայի կանոնագրի դրույթները խախտելու փաստի բացակայության մասին:

Որոշումը 3-օրյա ժամկետում գրավոր ուղարկվում է Ընկերության համապատասխան աշխատակցին, դիմումատուին և շահագրգիռ անձանց:

Եթե որոշմամբ արձանագրվել է Ընկերության աշխատակցի կողմից Էթիկայի կանոնագրի խախտման փաստը, ապա դրվում է Ընկերության տվյալ անդամի պատասխանատվության հարցը՝ օրենքով և ընկերության Ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

Որոշման արդյունքում եթեր հեռարձակված ցանկացած սխալ կամ ոչ հավաստի տեղեկատվություն շտկվում կամ հերքվում է անհապաղ:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ՇԱՆԹ» ՍՊԸ նախագահ՝ **Արթուր Եզեկյան**

Կ.Տ.